ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱԹՈՒՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ*

Յուրիկ Ղուլյան

Բանալի բառեր՝ Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, անկախություն, հռչակագիր, պայմանագիր, սահմանային խնդիրներ:

1918թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը վայր դրեց լիազորությունները և արձանագրեց իր տրոհման փաստը : Նույն օրը Վրացական ազգային խորհուրդը հայտարարեց Վրաստանի անկախության մասին, որին հետևեց Մուսուլմանական խորհրդի հայտարարությունը: 1918թ. մայիսի 28-ին Մուսուլմանական ազգային խորհրդի առաջին նիստի ժամանակ Ազգային խորհուրդը 24 կողմ և 2 դեմ ձայնով հռչակեց Ադրբեջանի անկախությունը և հրապարակեց «Ադրբեջանի անկախության ակտը» [1]: Ադրբեջանի անկախության հռչակագրում ասվում էր, որ այն լիիրավ անկախ պետություն է՝ բաղկացած Արևելյան և Հարավային Անդրկովկասից: «Անդրկովկասի հարավ» ասելով՝ Ադրբեջանը մտադիր էր Հայաստանի հաշվին ուղիղ տարածքային կապ ապահովել Թուրքիայի հետ: Ադրբեջանի Հանրապետությունը սկզբից ևեթ հայտարարեց, որ ինքնարժանի է տիրանալու Անդրկովկասի տարածքների մեծ մասին[2]: ԱԴՀ տարածքային հավակնությունների կապակցությամբ «Кавказское слово»-ն գրում էր, որ Արևելյան և Հարավային Անդրկովկասի վրա հղում անելը, կարծես թե, նշանակում էր, որ Ադրբեջանի կազմի մեջ պետք է մտներ այն ամենը, ինչը չէր մտնում Վրաստանի կազմի մեջ[3]:

Ադրբեջանը մտադիր էր նոր պետականության սահմաններում հասնել Անդրկովկասի քիչ թե շատ մուսուլմանաբնակ բոլոր շրջանների միավորմանը, մասնավորապես՝ Թիֆլիսի նահանգի արևելյան՝ Թիֆլիսի, Բորչալուի, Սղնախի գավառների մուսուլմանաբնակ շրջանների, Զաքաթալայի օկրուգի, Բաթումի մարզի, Երևանի նահանգի արևելյան և հարավային գավառների՝ Նոր Բայազետի, Երևանի, Էջմիածնի գավառների մասերի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Սուրմալուի գավառների, Կարսի մարզի, ինչպես և Դաղստանի միավորումը[4], ցամաքային կապ ապահովել Թուրքիայի հետ: Ի թիվս Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի գավառների, Կարսի մարզի միավորման՝ ենթադրում էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի, Զևանշիրի, Շուշիի, Կարյագինի գավառների միավորում: Ահա այսպիսին էին Ադրբեջանի տարածքային նկրտումները, որոնց իրականացմանը նա ձեռնամուխ եղավ անկախության հռչակումից ի վեր՝ աջակից ունենալով ցեղակից Թուրքիային:

Այս պայմաններում 1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: «Հայկական գավառներ» անվան տակ հասկացվում էին հայաբնակ այն գավառները, որոնք նախկինում գտնվում էին Երևանի, Թիֆլիսի և Գանձակի նահանգների կազմում: Այդ օրն էլ դարձավ Հայաստանի առաջին Հանրապետության ծննդյան օրը: Հանրապետությունները հռչակվել էին, սակայն, առանց սահմանները ճշտելու:

Նրանց միջև սահմանային հարցերի քննարկում տեղի ունեցավ 1918թ. մայիսի 11-ին՝ Բաթումում սկսված Թուրքիա-Անդրկովկասյան Հանրապետություն կոնֆերանսի ժամանակ: Անդրկովկասյան Հանրապետության պատվիրակության կազմում հայկա-

---

* Հոդվածն ընդունվել է 01.04.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 07.04.21:

կան կողմից բանակցություններին մասնակցում էին Ալեքսանդր Խատիսյանը (նախագահ), Հովհաննես Քաջազնունին և Միքայել Պապաջանյանը (անդամներ), խորհրդական Սիմոն Վրացյանը: Կոնֆերանսում հայկական կողմն իր հարևանների համեմատ գտնվում էր աննպաստ պայմաններում: «Հայերը գտնվում էին միանգամայն հասկանալի սարսափի մեջ, Կարս թուրքերի վերադարձով վտանգ էր ստեղծվել Հայաստանի ողջ ապագայի համար, և Ռուսահայաստանի այդպես թվացյալ լավ պաշտպանված գավառները այժմ ենթարկվում էին անմիջական և մահացու վտանգի: Ակնհայտ է, որ հայերը պետք է Բաթում ժամանեին ավելի ծանր զգացումով, քան վրացիները: Այլ դրության մեջ էին գտնվում ադրբեջանցիները: Նրանք թուրքերի մեջ սկսել էին տեսնել ցեղակիցների, որոնք ունակ էին իրենց շատ հարցերում օգնելու, նրանց ոչինչ չէր դրդում ողբերգական նայելու Բաթումի առաջիկա բանակցություններին»[5], - վկայում է կոնֆերանսի վրաց խորհրդական Զ.Ավալովը: Ադրբեջանցի-թուրքերի պատվիրակությունը Բաթումում թուրքական պահանջներին զուգահեռ պահանջում էր ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Ղարալագյազը (Վայոց ձոր), անգամ Երևան քաղաքը՝ «վեհանձնորեն»[6]՝ Հայաստանին թողնելով էջմիածինը: Նրանք անվերապահորեն պաշտպանում էին թուրքերին և իրենց քայլերը հարմարեցնում նրանց ծրագրերին: «Թուրքերը բառացիորեն դանակը դրել էին կոկորդին: Թուրքիայի ճնշման տակ վրացիները ստիպված էին որոշ տարածքային զիջումներ անել: Հայերը հրաժարվեցին Ելիզավետպոլի նահանգի մասերից՝ Ղարաբաղ»[7],- վկայում է Զ.Ավալովը: Այդ զիջումը տեղի ունեցավ մայիսի 21-ին: Թուրքերը Բաթումում հայերից պահանջեցին ամբողջ Գանձակի նահանգը՝ Ղարաբաղի հետ միասին և Նախիջևանի գավառը[8]: Հայկական կողմը թուրքերի ճնշման տակ իր համաձայնությունն է տալիս, որ Ղարաբաղը պատկանի Ադրբեջանին, իսկ Զանգեզուրը՝ Հայաստանին: Սակայն ադրբեջանցիները, դրանով չբավարարվելով, շարունակում են պահանջել նաև Զանգեզուրը[9] : Թուրքական պատվիրակության ղեկավար Վեհիբ փաշան Ա.Խատիսյանին բացեիբաց հայտնել էր, որ Զանգեզուրը չպետք է մնար ՀՀ կազմում, քանի որ այն և Նախիջևանը դեպի Բաքու տանող ճանապարհներից մեկն են ու նշել, որ հայերը պետք է մնան Վաղարշապատի ու Նոր -Բայազետի շուրջը [10]: Ուստի Ադրբեջանի ծավալապաշտական ձգտումները պատահական չէին և պայմանավորված էին Օսմանյան Թուրքիայի աշխարհաքաղաքական նպատակներով:

Հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանն իր գրառումների օրագրում մայիսի 20-ից 24-ը տեղի ունեցածի վերաբերյալ գրում է. «Այդ հինգ օրն անցնում են առանց իրադարձությունների, ծանձրալի և կուլիսների ետևում անվերջ զրույցներով: Թաթարները մեզ վրա ճնշում էին գործադրում Թուրքիայի վտանգով, մեզ հետ ունեցան խորհրդակցության ժամանակ առաջարկվեց սահմանաբաժանման նախագիծ՝ ամենահամեստ սահմաններով՝ առանց Ղարաբաղի, կոնֆեդերացիա, և համաձայնություն զիջելու Ախլցխայի և Սուրմալուի գավառները »[11]: «Նրանք այդ զիջումների դիմաց մեզ խոստացան աջակցել թուրքերի առաջ: Բայց առայժմ ոչինչ չի հաջողվում: Միևնույն ժամանակ Խալիլ բեյը սպառնում է վերջնագրով, չնայած այդպիսին դեռ մեզ չի առաջարկում: Ժորդանիան տեսնում է, որ հնարավոր է վերջնագիր, ուժեղ կանգնած է Վրաստանի անկախության հռչակման և այդ կերպ անջատ Թուրքիայի հետ պայմանագրի ստորագրման վրա» [12],-գրում է Ալ. Խատիսյանը:

Բաթումի կոնֆերանսում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Լոսովը Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի միջոցով մայիսի 23-ին Բեռլին ուղարկած հեռագրում տեղեկացնում էր նաև օսմանցիների և կովկասյան թաթարների կապի ու համագործակցության, նրանց համախոհ հանդես գալու մասին: Նա մասնավորապես նշում էր «Գանձակի և Բաքվի նահանգները թուրքերը գրավելու են թաթարների հետ համագործակցած: Թուրք քաղաքականությունը բացահայտորեն նպատակ ունի հայկական

հողերը նվաճել, սեփականացնել՝ վերջնագրից խուսափելու համար կողմերին կանգնեցնելով «կատարված իրողության առաջ» [13]:

Ճիշտ է նկատում պրոֆեսոր Հ.Հարությունյանը, որ թուրքերի ագրեսիվ դիրքորոշումը Հայաստանի հարցում գլխավորապես պայմանավորված էր այն արգելքով, որ Հայաստանն ուներ համաթուրանականության պլանների ճանապարհին, և որ Ղարաբաղի ու հայկական մյուս գավառների խնդրում թուրքերին ավելի շատ հետաքրքրում էր ոչ թե Ադրբեջանի ճակատագիրը, այլ՝ Օսմանյան կայսրության նախկին հողերում իրենց ազդեցության ոլորտի ընդլայնումը[14]: Ինչ վերաբերում է Անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների սահմանային հարցերի նկատմամբ Թուրքիայի մոտեցմանը, ապա Բաթումում նրա ներկայացուցիչները կտրականապես հայտարարեցին, որ սահմանների վերաբերյալ հարցը, այս կամ այն երկրամասի միացումը կամ անջատումը հանդիսանում է Անդրկովկասյան հանրապետությունների ներքին գործը[15]: Տպավորություն էր ստեղծվում, թե հանրապետությունների սահմանային հարցերում թուրքերը չեզոքության կողմնակից էին, մինչդեռ կոնֆերանսում պատվիրակությունների վրա ճնշումներն ու նրանց ներկայացված պահանջները հակառակն էին ապացուցում: Բաթումում անդրկովկասյան պատվիրակության ղեկավար Ա. Չխենկելին և մյուս վրացի պատվիրակները վարում էին զուտ վրաց-թուրք-ադրբեջանական բանակցություններ, որոնց մասին պատվիրակության փորձագետ, վրացի պետականագետ Զ. Ավալովը նշում է, որ դրանք գաղտնի էին հայերից: Թիֆլիսից այդ նպատակներով Բաթում էր եկել ժորդանիան[16]: Զ.Ավալովը գրում է. «Ընդհանուր առմամբ մեր մուսուլման բարեկամները հավաստիացնում են, որ ամեն գնով կպաշտպանեն երեք մասից բաղկացած Անդրկովկասը, սակայն իրենք ասում են, թե ինչ կլինի, եթե թուրքերը չհրաժարվեն իրենց պահանջներից, և նախագծվող երեք «կանտոններից» մեկը բացակայի: Իրենք այդ դեպքում կուզեն այնպես պահել գոնե երկու մասից բաղկացած Անդրկովկասը» [17]:

Կոնֆերանսի ընթացքում պատվիրակությունները երեք նիստեր են նվիրում սահմանային վեճերը հարթելու համար, սակայն թուրքական կողմը, անընդհատ նոր փաստարկներ բերելով, մերժում է հայ պատվիրակներին, անվիճելի հայկական հողեր «ճանաչելով» միայն Նոր-Բայազետի գավառը և Ալեքսանդրապոլի լեռնային մասը, որոնց մեջ հազիվ կիյնար 13 կիլոմետր երկաթուղի» [18]: «Այսպիսով, Հայաստանը պարփակվում էր Սևանա լճի շուրջը, առանց ելքի, օղակված և շրջապատված թշնամիներով ու առաջուց իսկ դատապարտված կորստյան» [19],- գրում է Ա.Բաբալյանը:

Բաթումում վերսկսված բանակցությունների ժամանակ Անդրկովկասյան սեյմի պատվիրակության մահմեդական անդամները փորձում էին Թուրքիայի օգնությամբ Երևանն անջատել Հայաստանից և այն դնել ազերիների տիրապետության տակ: Վերհիշելով այդ անցքերը՝ Ալ. Խատիսյանը գրում է. «Անդրկովկասյան սեյմի պատվիրակության մահմեդական անդամները ոչ միայն մեզի չեն օգներ, այլ ուղղակի կըվնասեն, երբ մենք թուրքերեն կպահանջենք թողնելու մեզի Ալեքսանդրապոլի գավառի հայկական մասը, Ադրբեջանի թաթարները ատոր դեմ կպնդեն, թե Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը պետք է ըլլա Վաղարշապատ՝(էջմիածին գյուղ) պահանջելով կցել Երևանը Ադրբեջանին» [20]: Երևանը հայկական կողմին թողնելու խնդրով Սեյմի հայկական բաժանմունքը 1918թ. մայիսի 26-ին մինչև Անդրկովկասյան սեյմի ցրվելը պաշտոնապես դիմեց Սեյմի ադրբեջանական բաժանմունքին: Հայկական կողմից բանակցությունները վարում էր պետական Դումայի նախկին անդամ, այնուհետ Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեի անդամ Միքայել Պապաջանյանը, թաթարների կողմից՝ Խասմամադովը, Ֆաթալի Խան-Խոյսկին և Մուսուլմանական ազգային խորհրդի մյուս անդամները[21]: Հայկական կողմի դիմումին ադրբեջանցի պատվիրակները դրական պատասխան են տալիս[22]:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը նորույթ չէր : Մինչև հանրապետությունների ստեղծումը ադրբեջանական կողմը մշտապես իր անհամաձայնությունն էր հայտնել հայ-ադրբեջանական սահմանաբաժանման վերաբերյալ հայկական կողմի առաջարկներին: Ադրբեջանցիները դեմ էին, որ հայապատկան ճանաչվեին հայահոծ գանգվածներով տարածքները [23]:

Օգտվելով իրենց ռազմական հաջողություններից՝ Բաթումում թուրքական կողմը ներկայացրեց ավելի կողոպտիչ պայմաններ և մայիսի 26-ին վերջնագիր ներկայացրեց անդրկովկասյան պատվիրակությանը: Բայց քանի որ հենց նույն օրը Անդրկովկասյան Հանրապետությունը կազմալուծվեց, ուստի նորահռչակ հանրապետություններից յուրաքանչյուրն ինքը պետք է լուծեր Թուրքիայի հետ պատերազմի և հաշտության հարցը: Հենց Հայաստանի Հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ին, Հայոց ազգային խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտություն կնքել թուրքերի հետ: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը գլխավորեց Ալեքսանդր Խատիսյանը:

Հայ-թուրքական բանակցությունները Բաթումում սկսվեցին մայիսի վերջին:

Բաթումում ընթացող բանակցություններից զատ 1918թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին սահմանազատման հարցի շուրջ բանակցություններ էին տեղի ունենում նաև Թիֆլիսում Հայոց ազգային խորհրդի և Մուսուլմանական ազգային խորհրդի ներկայացուցիչների միջև: Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավ.Ահարոնյանը Երևանի ազգային խորհրդին ուղղված նամակում նշում էր, որ երկու պետությունների սահմանազատման վերաբերյալ պետք է կնքվեր արձանագրություն, որը կցվելու էր խաղաղ պայմանագրին՝ Թուրքիայի հետ: Նա հայտնում էր, որ ՀՀ-ին էին մնալու Բորչալուի հայկական մասը, Ղազախի լեռնային մասը և ողջ Նոր Բայազետի գավառը, իսկ Ելիզավետպոլը, Շուշին, Զևանշիրը և Զանգեզուրը մնալու էին Ադրբեջանի կազմում և հավանաբար կազմելու էին հատուկ հայկական կանտոն: Դարալագյազի կարգավիճակի հարցը մնում էր վիճելի [24]: Նամակում նշվում էր, որ տեղի թաթարները չէին հավակնում Սուրմալուի գավառի նկատմամբ, որն իրենց կարծիքով Օսմանյան Թուրքիան ի վերջո թողնելու էր հայերին:

Եթե մինչև Հայաստանի Հանրապետության հռչակումը Բաթումում թուրքերը անդրկովկասյան պատվիրակության հայ ներկայացուցիչներին ուշադրություն չէին դարձնում, իսկ հանդիպումների ընթացքում օգտագործում էին միայն վերջնագրային լեզուն, ապա անկախության հռչակումից և հատկապես մայիսյան հերոսամարտերից հետո նրանց պահվածքն ու վերաբերմունքը հայերի հանդեպ փոխվեց: «Ձեր կռիվների մասին իմացանք Վեհիբ փաշայի հաղորդածներից: Չգիտենք՝ որքան ճշմարիտ են, համենայն դեպս, թեև փոքրիկ ու աղքատ, բայց անկախ Հայաստանի ստեղծումը պարտական ենք մեր զորքի անձնվիրությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու տաճիկները Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի միջև՝ հայերին ապահովելով սոսկ ֆիզիկական գոյություն: Պետք է կարծել, որ մեր զորքի դիմադրությունը ստիպեց ճանաչել մի Հայաստան» [25],- ասվում էր Թիֆլիսից Հայոց ազգային խորհրդի՝ Երևանի ազգային խորհրդին ուղարկած 1918թ. հունիսի 2-ի նամակում (Հայոց ազգային խորհրդի նախագահ՝ Ա.Ահարոնյան, քարտուղար՝ Ն.Ադբալյան):

Այդուհանդերձ Բաթումում թուրքերը մինչև վերջ էլ մնացին պայմաններ թելադրողի դերում՝ չցանկանալով գնալ որևէ զիջման: Երբ ներգործելու բոլոր տարբերակներն ավարտվեցին անարդյունք, հայ պատվիրակները առաջարկեցին իրենց պահանջները հեռագրով հաղորդել Պոլիս: Պահանջը կատարվեց: Հունիսի երկուսին Պոլսից ստացվեց հեռագիր, համաձայն որի՝ «հանուն սկսված լավ հարաբերություններու» թուրքերը զիջում էին Համամլու-Երևան խճուղին, իսկ սահմանն անցնելու էր Ձաջուռ կայարանով, Արագածի գագաթով դեպի էջմիածին, «որով մենք 100 քառակուսի կիլոմետր

տարածություն մը կշահեինք: Ասկե ավելի զիջում թուրքեր չըրին» [26],- գրում է Ալ.Խատիսյանը:

1918թ. հունիսի 2-ին Ա. Խատիսյանը նամակով պայմանագրի ստորագրման և նրա հիմնական դրույթների մասին շտապեց հայտնել Թիֆլիս՝ Ազգային խորհրդին, ապա հեռագրով՝ գեներալ Նազարբեկյանին: Հայտնելով, որ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային հարցը լուծվելու է հանրապետությունների միջև բանակցությունների ճանապարհով, Ալ.Խատիսյանն առաջարկում է հասնել նրան, որ կովկասյան թաթարները բոլորովին ձեռք չտան Երևանի նահանգին, և շտապ գրավել Շարուրը[27]: Հունիսի 3-ին նորից հայտնելով տարածքային սահմանային հարցերի մասին՝ Ալ. Խատիսյանը գրում է. «Ադրբեջանի կապակցությամբ պետք է մտածել. թուրքերը դրանք համարում են իրենց գավառը» [28]: Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև այսպես կոչված հաշտության և բարեկամության պայմանագիրը Բաթումում կնքվեց 1918թ. հունիսի 4-ին [29]: Թուրքիայի կառավարության անունից պայմանագիրը ստորագրեցին Խալիլ բեյը, Վեհիբ Մեհմեդ փաշան, Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝ Ալեքսանդր Խատիսյանը, Հովհաննես Քաջազնունին, Միքայել Պապաջանյանը: Պայմանագիրը պարտադրված ակտ էր ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից: Թեև Բաթումում քննարկումներ ու բանակցություններ եղան հայ-ադրբեջանական սահմանային խնդիրների շուրջ, սակայն դրանք Բաթումում չորոշվեցին: Պայմանագրում Ղարաբաղի ու Զանգեզուրի մասին խոսք չկար, թեև վրաց պատվիրակության խորհրդականը հաղորդում է, որ հայկական կողմը հրաժարվել էր նախկին Ելիզավետպոլի նահանգի մեջ մտած հայկական շրջաններից: Հատկանշական է, որ հայ պատվիրակներն իրենց գրառումներում դրա մասին ոչինչ չեն հաղորդում: Սակայն փաստ է, որ հայ-ադրբեջանական բանակցությունների ժամանակ մեկ անգամ չէ, որ ադրբեջանցիները դրա մասին հայերին հիշեցնում էին: Իրողությունն այն է, որ դա կատարվել էր թուրքական ճնշման պայմաններում: Բայց նաև իրողություն էր այն, որ հայկական կողմը դրան համաձայն չէր ու մտադրություն չուներ հրաժարվելու Ղարաբաղից ու Զանգեզուրից: Այդ դիրքորոշումը հստակ դրսևորվեց Հայոց ազգային խորհրդի հրապարակած անկախության հռչակագրում, որում իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն:

Նույն օրը Բաթումում պայմանագիր կնքվեց նաև Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Ադրբեջանցիներից այն ստորագրեցին Մուսլիմանական ազգային խորհրդի նախագահ Մամեդ Էմին Ռասուլզադեն և հանրապետության արտաքին գործերի նախարար Մամեդ Հասան Հաջինսկին, թուրքական կողմից՝ արդարադատության նախարար՝ Խալիլ բեկը և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան[30]: Բաթումի պայմանագրի երրորդ կետով նախատեսվում էր, որ «Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև կնքված և նրանց միջև փոխադարձ սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը կհաղորդվի օսմանյան կայսերական կառավարությանը» [31]: Պայմանագրի 14-րդ հոդվածով նախատեսվում էր, որ սույն պայմանագիրը կվավերացվի և վավերացված օրինակների փոխանակումը կկատարվի Կ.Պոլսում, մեկ ամսվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե դա հնարավոր կլինի: Այն ուժի մեջ էր մտնելու փոխանակման օրից: Սակայն պայմանագիրը չվավերացվեց այն ստորագրած պետությունների կողմից և օրինական ուժ չունեցավ: Բայց այդ ամենով հանդերձ Բաթումի պայմանագիրը մի քանի ամսով իր բացասական ազդեցությունը թողեց Հայաստանի Հանրապետության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական և տնտեսական կյանքի վրա[32]:

Այսպիսով՝ հանրապետությունների միջև սահմանային հարցը Բաթումում չորոշվեց[33], այն պետք է որոշվեր կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Բաթումի պայմանագրով Հայաստանը զրկվեց իր կենսական տարածքների զգալի մասից՝ կազմե-

լով ընդամենը 12.000 քառակուսի կիլոմետր: Կովկասում Ավստրո-Հունգարիայի զինվորական առաքելության ղեկավար ֆոն Ֆրանկենշտայնը, Վիեննա արտգործնախարարին ուղարկած զեկուցագրերում անդրադառնալով նորանկախ հանրապետությունների սահմանային խնդիրներին, մասնավորապես հաղորդում էր. «Հայաստանը կորցրել է տարածքները հյուսիսում ու հարավում, արևելքում ու արևմուտքում: Այսօր նա Հայաստան է առանց Լոռու և Ղազախի, առանց Արարատյան դաշտի, առանց Շիրակի ու Ախալքալաքի, առանց Զանգեզուրի ու Ղարաբաղի, առանց դարերով Հայաստանին պատկանող գավառների» [34]: Այնուհետև անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հարցին՝ հայտնում էր այնտեղ ապրող 150.000 հայերի ու 20 հազար մահմեդականների և այն մասին, որ այդուհանդերձ թուրքերը տարածքը համարում են ադրբեջանական: Ղարաբաղի նկատմամբ իրենց «պատմական իրավունքը» արդարացնելու նպատակով կեղծելով իրականությունը՝ ադրբեջանցիները նշում էին, որ Ղարաբաղի հայ բնակչությունը կազմում է անվիճելիորեն փոքրամասնություն[35]: Ըստ նրանց՝ հայերը կենտրոնացած են միայն նեղ լեռնային գոտում, չեն ներկայացնում էթնիկ զանգված, բոլոր կողմերից շրջապատված են համատարած թուրքական բնակչությամբ, տնտեսապես ու պատմականորեն կտրված են Հայաստանի Հանրապետության բնակչության մյուս կենտրոններից: Նույն բանը պնդում են մերօրյա ադրբեջանական վայ պատմաբանները, որոնց հակագիտական պնդումների համաձայն՝ «թուրքերի պատմական իրավունքը Ղարաբաղի նկատմամբ կասկածից դուրս է, քանի որ անկախ պատմագիտության մեջ առկա ողջ հակաթուրքական քարոզչությանը, թյուրքական տարրը հանդիսանում է Առաջավոր Ասիայի և Կովկասի բնիկը: Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի Հանրապետության հավակնությունները չեն արդարացվում ոչ պատմականորեն, ոչ տնտեսապես, ոչ էթնոգրաֆիական տվյալներով» [36]: Ադրբեջանցիների նկրտումների կապակցությամբ ավստրո-հունգարական զինվորական առաքելության ղեկավարը հայտնում էր. «Հայերն այն կամավոր չեն հանձնի, զենքը ձեռքներին պիտի պայքարեն և Ղարաբաղը երբեք չեն զիջի»[37]: Իր կանխատեսման մեջ նա չէր սխալվում: Արցախցիներն ու զանգեզուրցիներն ընդունեցան և մերժեցին Բաթումի պայմանագիրը, քանի որ իրենց վերաբերյալ Բաթումում կնքված «գործարքը» լիովին հակասում էր այդ տարածքների բնակչության կամքին ու ցանկությանը: Թեև Բաթումի պայմանագրի երրորդ կետով նախատեսվում էր, որ «Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև կնքված և նրանց միջև փոխադարձ սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը կհաղորդվի օսմանյան կայսերական կառավարությանը» [38], սակայն կողմերի միջև նման համաձայնագիր չկայացավ:

Այսպիսով՝ Անդրկովկասյան սեյմի լուծարման, հանրապետությունների անկախության հռչակման, այնուհետ Բաթումի բանակցություններում Հայաստանի ու Ադրբեջանի միջև չստորագրվեց որևէ գրավոր իրավական փաստաթուղթ, որով որոշվում էր հայ-ադրբեջանական միջպետական սահմանը, և որոշվում էր Ղարաբաղի և Զանգեզուրի պատկանելությունը կողմերից որևէ մեկին: Այնպես որ Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հետագա հավակնությունները որևէ միջազգային իրավական հիմք չունեին:

Անկախության ողջ ընթացքում Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև տարածքային վեճերը անհույս բնույթ կրեցին, իսկ դրանց ժամանակավոր լուծումը կախված էր բացառապես տվյալ պահին երկու կողմերի ուժերի հարաբերությունից: Երկու հանրապետությունների ստեղծման պահին նրանց հազիվ հաջողվեց պայմանավորվել Հայաստանի մայրաքաղաք Երևանի պատկանելության հարցի շուրջ, որը նույնիսկ մի քանի օր դարձավ վեճի առարկա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. История Азербайджана по документам и публикациям, Баку, 1990, стр. 166.
2. Там же.
3. Кавказское слово, Тифлис, 1918, 1 июня.
4. Կնյազյան Դ., Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920թթ., Երևան, 2008, էջ 178:
5. Авалов З., Независимость Грузии в международной политике 1918-1921гг., Париж, 1923, стр. 36.
6. Իրազեկ., Մոտիկ անցյալից, Բեյրութ, 1956, էջ 24:
7. Авалов З., նշվ. աշխ., էջ 57:
8. Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1923թթ., Երևան, 1996, էջ 30:
9. Լեո., Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 425:
10. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 70:
11. Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 161:
12. Նույն տեղում:
13. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 211:
14. Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 30:
15. Нагорный Карабах в 1918-1923гг., сборник документов и материалов, Ереван, 1992, стр.16.
16. Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 77:
17. Авалов З., Независимость Грузии в международной политике 1918-1921гг., Париж, 1923, стр. 57.
18. Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 86:
19. Բաբալյան Ա., էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրե, 1959, էջ 11:
20. Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 75:
21. Туманян М. Дипломатическая история Республики Армения 1918-1920гг., Ереван, 2012, стр. 383.
22. Балаев А. Азербайджанское Национальное движение в 1917-1918гг., Баку, 1998, стр. 84.
23. Դադյան Խ., Հայերը և Բաքուն 1850-1920-ական թթ., Երևան, 2006, էջ 101:
24. ՀԱԱ. ֆ.222, g.1, գ.24, թ. 240:
25. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության մարմինների ստեղծումը, Երևան, 2009, էջ 42:
26. Խատիսյան Ա., նշվ. աշխ.,էջ 86:
27. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918թ, էջ 251:
28. Նույն տեղում:
29. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, Երևան, 1972, էջ 533-536:
30. Волхонский М., Муханов В., По следам Азербайджанской Республики, Москва, 2007, стр. 84.
31. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, էջ 533-536:
32. Նավոյան Է., Բաթումի պայմանագիրը և Հայկական հարցը, Կանթեղ, էջ 89:
33. Աբրահամյան Հր., Մարտնչող Արցախ.1917-2000թթ., Գիրք Ա., Երևան, 2003, էջ 44-45:

34. История Армении, Ереван, 2000, стр.200.
35. Туманов А., Дипломатическая история РА, стр. 17.
36. «Վերջապես թուրքերի պատմական իրավունքը Ղարաբաղի նկատմամբ կասկածից դուրս է, քանի որ անկախ պատմագիտության մեջ առկա ողջ հակաթուրքական քարոզչությանը, թյուրքական տարրը հանդիսանում է Առաջավոր Ասիայի և Կովկասի բնիկը: Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի Հանրապետության հավակնությունները չեն արդարացվում ոչ պատմականորեն, ոչ տնտեսապես, ոչ էթնոգրաֆիական տվյալներով»,- լրացնում են պատմաշինարարության մեջ հմտացած հակահայ մերօրյա ադրբեջանցի «վայ» պատմաբանները: Преступления армянских террористических и бандитских формировании против человечества 19-21 вв., Баку, 2002, стр. 39.
37. История Армении, стр. 200.
38. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, էջ 533-536:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրները Բաթումի կոնֆերանսում

Յուրիկ Ղուլյան

Հայ-ադրբեջանական հակամարտությունը նորույթ չէր: Մինչև հանրապետությունների ստեղծումը ադրբեջանական կողմը մշտապես իր անհամաձայնությունն էր հայտնել հայ-ադրբեջանական սահմանաբաժանման վերաբերյալ հայկական կողմի առաջարկներին: Ադրբեջանցիները դեմ էին, որ հայապատկան ճանաչվեին հայահոծ զանգվածներով տարածքները: Հանրապետությունները հռչակվել էին, սակայն առանց սահմանները ճշտելու: Ադրբեջանի Հանրապետությունը սկզբից ևեթ հայտարարեց, որ ինքն արժանի է տիրանալու Անդրկովկասի տարածքների մեծ մասին: Ադրբեջանը մտադիր էր նոր պետականության սահմաններում հասնել Անդրկովկասի քիչ թե շատ մուսուլմանաբնակ բոլոր շրջանների միավորմանը: Անդրկովկասյան սեյմի լուծարման, հանրապետությունների անկախության հռչակման, այնուհետ Բաթումի բանակցություններում Հայաստանի ու Ադրբեջանի միջև չստորագրվեց որևէ գրավոր իրավական փաստաթուղթ, որով որոշվում էր հայ-ադրբեջանական միջպետական սահմանը և որոշվում էր Ղարաբաղի և Զանգեզուրի պատկանելությունը կողմերից որևէ մեկին: Այնպես որ Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հետագա հավակնությունները որևէ միջազգային իրավական հիմք չունեին:

Անկախության ողջ ընթացքում Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների միջև տարածքային վեճերը բացարձակապես անհույս բնույթ կրեցին, իսկ նրանց ժամանակավոր «լուծումը» կախված էր բացարձակապես յուրաքանչյուր պահի ուժերի հարաբերակցությամբ: Երկու հանրապետությունների ստեղծման պահին նրանց հազիվ հաջողվեց պայմանավորվել Հայաստանի անվիճելի միջուկի՝ Երևանի շուրջ, և նույնիսկ Հայաստանի մայրաքաղաք Երևանի պատկանելության հարցը դարձավ մի քանի օրերի վեճի առարկա:

РЕЗЮМЕ

Армяно-азербайджанские пограничные проблемы на Батумской мирной конференции

Юрик Гулян

Ключевые слова: Армения, Азербайджан, Турция, независимость, декларация, договор, пограничные проблемы.

Армяно-азербайджанское противостояние не является чем-то новым. До образования республик азербайджанская сторона всегда выражала свое несогласие по поводу демаркации армяно-азербайджанской границы, которую предлагала армянская сторона. Азербайджанцы были против того, чтобы к Армении отошли территории с превалирующим армянским населением. Республики были провозглашены, однако, без уточнения границ. Азербайджанская Республика с самого начала дала понять, что собирается завладеть большей частью территории Закавказья. Азербайджан намеревался в границах новой государственности достичь объединения всех областей Закавказья, в которых проживало мусульманское население. После упразднения Закавказского Сейма, провозглашения независимости республик и на последующих Батумских переговорах между Арменией и Азербайджаном не было подписано ни одного письменного правового документа, по которому определялись бы армяно-азербайджанская межгосударственная граница и принадлежность Карабаха и Зангезура одной из сторон. Таким образом, дальнейшие притязания Азербайджана на Карабах и Зангезур не имели под собой никакой международной правовой основы.

На протяжении всего периода независимости территориальные споры между правительствами Армении и Азербайджана приобрели абсолютно безнадежный характер, а их временное «решение» было связано только лишь с соотношением сил на данный момент. С самого начала образования двух республик им с трудом удалось договориться о бесспорном ядре Армении – Ереване – и даже вопрос о принадлежности столицы Армении стал предметом многодневных обсуждений.

SUMMARY

Armenian-Azerbaijani Border Issues at the Batumi Conference

Yurik Ghulyan

Keywords: Armenia, Azerbaijan, Turkey, independence, declaration, treaty, border issues.

The Armenian-Azerbaijani conflict was not new. Prior to the establishment of the republics, the Azerbaijani side had always expressed its disagreement with the proposals of the Armenian side on the Armenian-Azerbaijani border. The Azerbaijanis were against recognizing the territories with Armenian-populated masses as Armenian. The republics were proclaimed, however, without clarifying their borders. From the beginning, the Republic of Azerbaijan stated that it deserves to occupy most of the Transcaucasian territories. Azerbaijan intended to achieve the unification of all more or less Muslim regions of the Transcaucasia within the borders of the new statehood. In the negotiations on the dissolution of the Transcaucasian Seim, the declaration of independence of the republics, and then in the Batumi conference, no written legal document was signed between Armenia and Azerbaijan, which would define the Armenian-Azerbaijani interstate border or determine the affiliation of Karabakh and Zangezur to either party. Thus, Azerbaijan's further claims to Zangezur and Karabakh had no international legal basis. Throughout the independence, the territorial disputes between the governments of Armenia and Azerbaijan were absolutely hopeless, and their temporary "solution" depended on the balance of power at absolutely every given moment.

At the time of the creation of the two republics, they hardly managed to reach an agreement on the indisputable core of Armenia, Yerevan, and even the question of the ownership of the capital of Armenia, Yerevan, became a subject of dispute for several days.